

ՍԱՐԿԱԻԱԳԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Շարաթ, 26 Մարտ 1977, Ս. Գրիգոր Լուսաւորչի Մուտն ի Վերապի տօնին, Ալեքս եւ Մարի Մանուկեան ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծա-
յարանի Վերատեսուչ Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան աւագ սարկաւագ
ձեռնադրեց Դպրեմանքի երեք ուսանողներ՝ Տրց. Սիմոն Պալեան, Տրց. Յա-
րութիւն Անուշեան եւ Տրց. Սարգիս Մանկասարեան, բոլորն ալ Թուրքիայէն:

Սուրբ Պատարագէն առաջ, առաւօտեան ժամերգութեան աւարտին,
Ս. Բակորեանց Տաճարի Ս. Գլխադրի սրբատեղիին առջեւ, ծնրադիր երեք ու-
րարակիրներուն Գերաշնորհ Սրբազանը շնորհեց կիսասարկաւագութեան աս-
տիճան. իսկ պատարագի ընթացքին՝ յատուկ արարողութեամբ, աւագ սար-
կաւագ ձեռնադրեց նոր ընծայեալները: Յուզիչ եւ Հայաստանեայց Եկեղեցիի
լուսաւորչադիր աւանդութեան համաձայն կատարուած ձեռնադրութեամբ, ե-
րեք սարկաւագները ուխտած եղան իրենց կեանքը նուիրել Առաքելական Սուրբ
մեր Եկեղեցիին եւ Ժողովուրդին ծառայութեան:

Իսկ նոյն օրը, կէսօրին, նոր ձեռնադրուած սարկաւագները ճաշեցին
Վանքի սեղանատան մէջ. ճաշին ներկայ եղան Գերշ. Վերատեսուչ Սրբազանը,
Միաբան Հայրեր, Դպրեմանքի ուսուցչական կազմը եւ ուսանողութիւնը:
Գերշ. Շահէ Արքեպիսկոպոս զեղեցիկ յորդորակնով մը թելադրեց բարեշը-
նորհ սարկաւագներուն՝ հաւատարիմ մնալ մեր Եկեղեցւոյ սրբազան աւանդու-
թիւններուն, անսակարկ զոհարերութեամբ ծառայել անոր, ինչպէս նաեւ Ս.
Բակորեանց դարաւոր Հաստատութեան:

* * *

Բարեշնորհ Սիմոն Սրկ. Պալեան ծնած է Մերտին, եւ շատ կանուխ,
1968ին, հազիւ տաս տարեկան, եկած Երուսաղէմ: Որոշ շրջան մը Վանքի Ս.
Թարգմանչաց Վարժարանին մէջ ուսանելէ ետք, ընդունուած է Դպրեմանք, եւ
ներկայիս ուսանող է Ընծայարանի աւարտական կարգին:

Բարեշնորհ Եարութիւն Սրկ. Անուշեան ծնած է Պոլիս. ինք եւս հա-
զիւ տասներկու տարեկան՝ 1970ին եկած է Երուսաղէմ եւ այժմ կ'աշակերտի
Ընծայարանի մէջ:

Բարեշնորհ Սարգիս Սրկ. Մանկասարեան, բնիկ Պոլսեցի, Դպրեմանք
ընդունուած է 1974ին եւ ինք եւս աշակերտ է Ընծայարանի բաժնին: